Հաշվետվություն

2025 թվականի մայիսի 4-ից մինչև 9-ը Շվեդիայի Թագավորության Գավլե քաղաք գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Արամ Գուգարաց, Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ

   Վահագն Մուրադյան, Կադաստրի կոմիտեի գեոդեզիայի և հողաշինարարության վարչության պետ

   Կարեն Գրիգորյան, Կադաստրի կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Շվեդիայի Թագավորություն, Գավլե քաղաք, մայիսի 4-ից 9-ը

3. **Հրավիրող կողմը.**

   Շվեդիայի Թագավորության քարտեզագրման, կադաստրային և հողերի գրանցման մարմին (Lantmäteriet):

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդիրների լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Մասնակցություն գեոիդ մոդելի մշակման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներին:

5. **Քննարկված թեմաները.**
   - Շվեդիայի գեոդեզիական ենթակառուցվածքը
   - Գեոիդ, բարձրունքային համակարգ և գրավիտացիա
   - Շվեդիայի գեոիդ մոդելի սահմանումը
   - Գեոիդ մոդելի սահմանման համար անհրաժեշտ տվյալները
   - GNSS բարձունքային համակարգը Շվեդիայում
   - Բացարձակ և հարաբերական գրավիմետրիա
   - Գործնական աշխատանքների հիման վրա ծանրաչափական հաշվարկի կատարում
   - SWEPOS-ի ներկայացում
   - Բեռնես ծրագրային ապահովման միջոցով մշտական գործող ռեֆերենց կայանների ցանցի տվյալների մշակում, հավասարակշռում:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված և քննարկված հարցերը.**

   Վահագն Մուրադյանը ներկայացրեց ՀՀ գեոդեզիական գործունեության ոլորտում կատարված աշխատանքները:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Վերապատրաստման շրջանակներում նախապես ձեռք բերված պայմանավորվածության համաձայն Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ Արամ Գուգարացը հանդիպել է Շվեդիայի Թագավորության միջազգային զարգացման համագործակցության գործակալության (SIDA) ներկայացուցչի հետ: Հանդիպման ընթացքում կարևորվել է մեկշաբաթյա վերապատրաստման օրակարգը, որը համապատասխանեցված է եղել Կոմիտեի ներկայացուցիչների մասնագիտական կարիքներին՝ սահմանելով վերապատրաստման նպատակները ձևաչափի, բովանդակության և կառուցվածքի առումով: Այնուհետև քննարկվել է միջազգային զարգացման համագործակցության գործակալության և կադաստրի կոմիտեի միջև հնարավոր համագործակցության ուղիները՝ Հայաստանում գեոիդ մոդելի ստեղծման փորձին: Երկրներին միջազգային զարգացման համագործակցության գործակալության կողմից տրամադրվող աջակցությունը սահմանված է Շվեդիայի Թագավորության կառավարության կողմից որոշված ռազմավարություններով: Միաժամանակ նշվել է, որ Կադաստրի կոմիտեն հետաքրքրված է Շվեդիայի Թագավորության քարտեզագրման, կադաստրային և հողերի գրանցման մարմնի (Lantmäteriet) հետ հետագա համագործակցությամբ, որը կարող է զարգանալ տարբեր ձևաչափերով, մասնավորապես՝ երկու երկրների փորձագետների աշխատանքային հանդիպումների, սեմինարների և համատեղ աշխատաժողովների միջոցով:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Դասընթացների ընթացքում հիմնավորվեց ՀՀ նոր գեոիդ մոդելի մշակման կարևորությունը ճշգրիտ բարձրություններ ունենալու նպատակով:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց հետագա համագործակցությունը շարունակելու համար:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

Արամ Գուգարաց

Վահագն Մուրադյան

Կարեն Գրիգորյան

13.05.2025